ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

16 սեպտեմբերի 2013թ.

Նախագահ Ա. Յուցուլյան

Քարտուղար Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

*ՕՐԱԿԱՐԳ*

*1. Ֆակուլտետում մասնագիտական խմբերի ստեղծում:*

*/զեկ. Ա. Վ. Յուցուլյան/*

*2. Հարատև ուսումնառության համակարգ սոցիալական պատվերին համապատասխան:*

*/զեկ. Ա. Վ. Յուցուլյան/*

**ԼՍԵՑԻՆ-** Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Յուցուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Յուցուլյանը: Նա ներկայացրեց, որ պետք է կազմվեն կրթական ծրագրեր ֆակուլտետի մասնագիտության համար: Կրթական ծրագրերը պետք է արտացոլեն նախնական գիտելիքները, դասավանդվող առարկաները, ուսումնառության ձևերը և կրթական արդյունքները: Զեկուցողն առաջարկեց ստեղծել մասնագիտական խումբ, որոնք մեկամսյա ժամկետում պետք է վերանայեն կրթական ծրագրեր և ներկայացնեն ֆակուլտետի խորհրդի հաստատմանը: Նա խորհուրդ տվեց օգտվել ԵՊՀ-ի և այլ առաջատար ԲՈՒՀ-երի փորձից: Զեկուցողն առաջարկեց «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության համար հետևյալ մասնագիտական խումբը.

1. Յուցուլյան Արտակ Վոլոդյայի-դեկան
2. Զաքարյան Մանվել Աշոտի-Բ/Մ և ինֆորմատիկայի ա/վ
3. Քամալյան Ռաֆայել Ռուբենի-Բ/Մ և ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ
4. Մակարյան Արմեն Հովհաննեսի- Ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի դոցենտ
5. Մելիքյան Մելինե Կառլենի-ԿՄ/Ֆ IV կուրսի ուսանողուհի
6. Մարդանյան Արթուր Գուրգենի- ԿՄ/ՖIV կուրսի ուսանող

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –** Խորհրդի անդամների կողմից եղավ ընդհանուր քննարկում ներկայացված ցուցակի վերաբերյալ: Առաջարկեցին հաստատել:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Հաստատել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության մասնագիտական խմբի հետևյալ ցուցակը.

1. Յուցուլյան Արտակ Վոլոդյայի-դեկան
2. Զաքարյան Մանվել Աշոտի-Բ/Մ և ինֆորմատիկայի ա/վ

3. Քամալյան Ռաֆայել Ռուբենի -Բ/Մ և ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ
4. Մակարյան Արմեն Հովհաննեսի- Ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի դոցենտ
5. Մելիքյան Մելինե Կառլենի-ԿՄ/Ֆ IV կուրսի ուսանողուհի
6. Մարդանյան Արթուր Գուրգենի - ԿՄ/ՖIV կուրսի ուսանող

Ֆակուլտետի խորհրդի նախագահը մասնագիտական խմբին տվեց ընդհանուր հանձնարարական կրթական գրքի նորացման և ընթացիկ գործընթացի մասին:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ընդգծեց, որ հաշվի առնելով աշխատաշուկայի և ժամանակակից տնտեսության պահանջները, հարատև ուսումնառության համակարգը անհրաժեշտ է, որ այն համապատասխանի սոցիալական պատվերին:

Այդ ուղղությամբ *«էկոլոգիական քիմիա»* մասնագիտությունը փոխարինել*«Քարտեզագրություն և կադաստրային գործ»* մասնագիտությամբ, որի շրջանավարտների կարիքը մեծ է մեր մարզում: Նրանք կարող են իրականացնել հանրապետության ամբողջ տարածքի հողի, անշարժ և շարժական գույքի կադաստրային աշխատանքները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**-Ա. Շ. Մարգարյանը: Նա լինելով ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար հիմնավորեց զեկուցողի այն միտքը, որ ներկայիս աշխատաշուկայի պահանջարկը մեծ է առավելապես *«Քարտեզագրություն և կադաստրային գործ»* մասնագիտության գծով: Դիմորդների մասնագիտական ուղղվածությունը հակված է նշված մասնագիտությանը:

Այնուհետև միտքը շարունակեց «Անտառագիտության» ամբիոնի վարիչ Ա. Զ. Ալավերդյանը: Նա ևս հաստատեց առաջարկը, ընդգծելով, որ *«Քարտեզագրություն և կադաստրային գործ»* մասնագիտացման շրջանավարտները կարող են աշխատել Քարտեզագրության և գեոդեզիայի կենտրոնում, պետական կադաստրի կոմիտեի ստորաբաժանումներում, տարբեր գիտահետազոտական ինստիտուտներում ինստիտուտներում, էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում: Ամբիոնի վարիչը նշեց նաև, որ ապահովված է նշված մասանգիտության դասավանդման համար անհրաժեշտ մասնագետներով:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը *«էկոլոգիական քիմիա»* մասնագիտությունը փոխարինել*«Քարտեզագրություն և կադաստրային գործ»* մասնագիտությամբ:

**ՆԱԽԱԳԱՀ Ա.Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**